# ԳՈՀԱՑՈՂ ՍԻՐՏ
# THANKFUL HEART

**ՂՈՒԿ. 17:11-19**

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**1 Թես. 5:18 -** 18 **Ամեն բանի մէջ** գոհացէք. որովհետեւ սա է Աստուծո կամքը ձեզ վրա Քրիստոս Յիսուսումը:

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

**(Ղուկ. 17:11-19)**

11 Եւ մինչ նա դեպի Երուսաղէմ էր գնում, անցնում էր Սամարիայի եւ Գալիլեայի միջով: 12 Եւ
երբ մի գյուղ էր մտնում, նորան հանդիպեցին տասը բորոտներ, որրոնք հեռու կանգնեցին, 13
Եւ բարձրացրին իրանց ձայնը եւ ասեցին. Յիսուս՝ **Վարդապետ,** ողորմիր մեզ:

14 Եւ երբոր նորանց տեսվ՝ ասեց նրանց. Գնացէք դուք ձեզ **քահանաներին** ցույց տուէք. եւ
եղավ, որ նորանք գնալիս՝ **սրբուեցան:**

15 Եւ նորանցից մէկը, երբ տեսավ թէ **բժշկուեց,** վերադարձավ և բարձր ձայնով
**փառավորում էր Աստուծուն:** 16 Երեսի վրա ընկավ Յիսուսի ոտների առաջ, եւ գոհանում էր
(շնորհակալություն էր) նորանից. եւ ինքը Սամարացի էր:

17 Յիսուսն էլ պատասխանեց եւ ասեց. Չէ՞ որ տասն էլ սրբուեցան. ապա այն ինն ո՞ւր են: 18 Ետ
դառնողներ չ'գտնուեցան, որ **Աստուծուն** փառք տան, բացի այս այլազգին: 19 Եւ ասեց
նորան. Վեր կաց՝ գնա. որովհետև քո հավատքը քեզ **փրկեց:**

## I. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՔԻ և ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

**I AM THANKFUL FOR GOD'S GRACE AND MERCY**

*13 Եւ բարձրացրին իրանց ձայնը եւ ասեցին. Յիսուս՝* ***Վարդապետ, ողորմիր*** *մեզ:*

**«Եթե հաջողության հասնեմ, ես կգոհանամ Նրանից: Եթե ձախողվեմ, ես կփնտրեմ Նրա շնորհքը»: Մաքս Լուկադո**

> ***Ողբ. 3:22-24 - 22*** *Անսպառ են Տիրոջ* ***ողորմությունները,*** *Նրա գթությունները չեն նուազում: 23 Նորանք ամեն առավոտ նորանոր են. մեծ է քո հավատարմութիւնը: 24 Իմ բաժինը Տէրն է, ասեց իմ հոգին, սորա համար նորան եմ Յուսալու:*

**«Մարդու մտավոր վիճակը, որը տեսնում է Աստծուն ամեն ինչում, վկայում է շնորհքի ավելացման և շնորհակալ սիրտ ունենալու մասին»: —Charles Finney (1792-1875)**

- **Ամենամեծ ողորմությունն այն է որ ես սրբված եմ նրա արյունով:**

  ***Ես. 53:5 - 5*** *Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար, եւ մեր անօրէնութիւնների համար հարուածվեց, մեր խաղաղութեան համար նա պատիժ կրեց, եւ նորա վէրքերով մենք* ***բժշկուեցինք:***

## II. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՅԱՆ ՀԱՄԱՐ, ՈՐԸ ՄԱՔՐՈՒՄ Է ԻՄ ՄԵՂՔԵՐԸ

**I AM THANKFUL FOR CHRIST'S BLOOD THAT CLEANSES ME OF ALL OF MY SIN**

*14 Եւ երբոր նորանց տեսվ՝ ասեց նրանց. Գնացէք դուք ձեզ* ***քահանաներին*** *ցույց տուէք. եւ եղավ, որ նորանք գնալիս՝* ***սրբուեցան:***

***Սաղ. 51:2 -*** *լվա ինձ իմ անօրէնությունից և իմ մեղքերից մաքրիր ինձ:*

*Գնացէք դուք ձեզ* ***քահանաներին*** *ցույց տուէք.* ***Աստված մեզ մաքրում է իր ԽՈՍՔՈՎ:***

- ***Եփ. 5:25-27 -*** *25 ...Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար, 26 որ սրբացնի ավազանի մաքրութեամբ՝ խօսքով, 27 որպէսզի նա իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղութիւն կամ նման բաներից ոչինչ չունենա, այլ լինի սուրբ եւ անարատ:*

**«Երբ մենք դատում ենք մեր եղբոր կամ քրոջ մեղքն ավելի խստորեն, քան մերը, մենք նման ենք բորոտների, ովքեր վերքեր են հաշվում. «Նրա վերքերն ավելին են, քան իմը»: Հեղինակ՝ Բեթ Մուր, Beth Moore**

**"When we judge a brother's or sister's sin as so much worse than our own, we are like lepers counting spots. "She has more than I do." Author: Beth Moore**

## III. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՒ ՀԱՄԱՐ.

**I AM THANKFUL FOR THE GIFT OF SALVATION**

*15 Եւ նորանցից մէկը, երբ տեսավ թէ բժշկուեց, վերադարձավ և բարձր ձայնով* ***փառավորում էր*** *(ում վարդապետին)* ***Աստուծուն:*** *16 Երեսի վրա ընկավ Հիսուսի ոտների առաջ, եւ* ***գոհանում էր*** *(շնորհակալություն էր) նորանից. եւ ինքը Սամարացի էր: ...9 Եւ ասեց նորան. Վեր կաց՝ գնա. որովհետև քո հաւատքը քեզ փրկեց:*

**«Իրական աստվածապաշտության ամենաակնհայտ նշաններից մեկը անկեղծ գոհությունն է՝ ուղղված ձեր երկնային Հորը»: –Պատրիսիա Էննիս**

**One of the most evident signs of genuine godliness is a sincere display of appreciation towards your heavenly Father. – Patricia Ennis**

**2 Կոր. 9:15 -** 15 Եւ շնորհակալութիւն Աստուծուն նորա անպատմելի **պարգեւի** համար:

**«Գոհությունն իմաստավորում է մեր անցյալը, խաղաղություն է բերում մեր ներկայում և տեսիլք է ստեղծում ապագայի համար»: Մելոդի Բիթթի**

**"Gratitude makes sense of our past, brings peace for today, and creates a vision for tomorrow." –Melody Beattie**

**IV. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՆՐԱ ՀՈԳՈՒ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**
**I AM THANKFUL FOR THE POWER OF HIS SPIRIT**

**Մատ. 10:8 - 8** Հիվանդներին բժշկեցէք, **բորոտներին սրբեցէք,** մեռելներին հարուցյուն տվեք, դեվերը հանեցէք. ձրի առել էք, ձրի տուէք:

## ԱՄՓՈՓՈՒՄ

**I. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՔԻ և ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**
**I AM THANKFUL FOR GOD'S GRACE AND MERCY**

**II. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՅԱՆ ՀԱՄԱՐ, ՈՐԸ ՄԱՔՐՈՒՄ Է ԻՄ ՄԵՂՔԵՐԸ**
**I AM THANKFUL FOR CHRIST'S BLOOD THAT CLEANSES ME OF ALL OF MY SIN**

**III. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎԻ ՀԱՄԱՐ.**
**I AM THANKFUL FOR THE GIFT OF SALVATION**

**IV. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՆՐԱ ՀՈԳՈՒ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**
**I AM THANKFUL FOR THE POWER OF HIS SPIRIT**